Л. А. ПОГОСЯН, Армянская колония Армавира, издательство АН Армянской ССР, Ереван, 1981, 180 с.

Լ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ, *Արմավիրի հայկական գաղթօջախը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981, 180 էջ։*

Հայ գաղթավայրերի պատմությունը մեր ժողովրդի պատմության բաղկացուցիչ մասն է, առանց որի այն ամբողջական չի կարող լինել։ Դա բացատրվում է այն իրողությամբ, որ հայ գաղթավայրերի ավանդը նշանակալից է մեր ժողովրդի մշակույթի, ազգային-ազատագրական գաղափարախոսության, հասարակական մտքի զարգացման, հայ-ռուսական կապերի բնագավառներում։ Հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրությունը լուրջ ներդրում է նաև ասպնջական երկրի պատմության հետազոտության բնագավառում։ Չնայած այս ակնհայտ ճշմարտությանը, մինչև վերջին երկու-երեք տասնամյակները հայ գաղթավայրերի պատմությունը հատուկ գիտական ուսումնասիրությունների չէր արժանացել։ Հայագիտության այս բացը զգալի չափով լրացվել է Ա. Աբրահամյանի, Վ. Միքայելյանի, Վ. Բարխուդարյանի, Ս. Հովնանյանի, Վ. Գրիգորյանի, Ժ. Անանյանի, Ջ. Գալստյանի, Վ. Խաչատրյանի, Ս. Քոլանջյանի, Ռ. Աբրահամյանի և այլոց շանքերով։ Շնորհիվ վերը հիշատակված պատմաբանների, ուսումնասիրված են Ղրիմի, Նոր Նախիջևանի, Գրիգորիոպոլիսի, Աստրախանի, Ուկրաինայի, Լեհաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հնդկաստանի և այլ երկրների հայ գաղթավայրերի բազմաբովանդակ հարուստ պատմությունը։ Մեր ժողովրդի պատմության մեջ ունեցած առանձնահատուկ դերով է բացատրվում այն իրողությունը, որ ուսումնասիրողների առաջնահերթ ուշադրությանն են արժանացել Ռուսաստանի և Ուկրաինայի հայ գաղթավայրերը։

Ռուսաստանի հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված ուսումնասիրությունների շարքը վերջերս լրացավ Լ. Պողոսյանի «Արմավիրի հայկական գաղթօջախը» աշխատությամբ։ Այն բաղկացած է ներածությունից, չորս գլխից և վերջաբանից։

Ներածության մեջ հեղինակը վերլուծում է Արմավիրի պատմության աղբյուրները, գիտականորեն արժեքավորում նախորդ ուսումնասիրողների ավանդը, համեմատելով վերջիններիս կարծիքների հետ կամ փաստերի համակողմանի ուսումնասիրությամբ առարկում նրանց՝ գաղթօջախի պատմության այս կամ այն խնդրում։

Ռուսաստանի հայ գաղթավայրերի պատմության մեջ Արմավիրի հայ գաղթօջախը յուրօրինակ է ինչպես առաջացման ժամանակի, հիմնադրման և զարգացման հանգամանքների, այնպես էլ բնակչության կազմի առումով։ Այդ գաղթօջախը ծնունդ առավ այն ժամանակ (1839), երբ Ռուսաստանի մյուս հայ գաղթավայրերը (բացառությամբ Նոր Նախիջևանի) ապրում էին իրենց մայրամուտը։ Դա բացատրվում էր նրանով, որ Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու պատճառով նվազել էր այդ գաղթավայրերի տնտեսական և քաղաքական դերը, սկսել էին վերացվել նախկինում դրանց շնորհված արտոնությունները։

Արմավիրի հայ գաղթօջախը հիմնադրելու հանգամանքները թելադրվում էին XIX դ. առաջին կեսին Կովկասի հյուսիս-արևմտյան մասում ստեղծված ռազմաքաղաքական իրադրությամբ, ինչպես նաև այդտեղ ռուս կամ Ռուսաստանին համակրող քրիստոնյա ազգաբնակչությամբ բնակավայր ստեղծելու անհրաժեշտությամբ։ Արմավիրը, այսպիսով, Ռուսաստանի ուշ հիմնադրված հայ գաղթօջախներից էր։ Այդ գաղթօջախի յուրահատկությունն էր նաև այն, որ նրա հայ ազգաբնակչությունը ոչ թե եկել էր անմիջականորեն Հայաստանից և հայաբնակ դրացի երկրներից, այլ սերում էր վաղուց այդ վայրերում բնակվող այսպես կոչված «չերքեզահայերից»։ Գաղութի հիմնադրման խնդրի հետ կապված քաղաքական, տնտեսական, ռազմատարածքային հարցերի լուսաբանումն էլ կազմում է դրախոսվող աշխատության առաջին գլխի խնդրո առարկան։ Ի պատիվ հեղինակի, հարկ է նշել, որ նա չի խուսափել չերքե-

զահայերի ծագումը լուսաբանելու բավականին բարդ խնդրից (թեև այն անմիջական կապ չունի Արմավիրի պատմության հետ) և այդ խնդիրը քննելիս կատարել է իր սեփական հիմնավորված դատողությունները, եզրակացնելով, որ «հայերի վերաբնակեցումը Չերքեզիա՝ տեղի է ունեցել հիմնականում XV դ., Ղրիմից» (էջ 21)։

Ռուսաստանի տնտեսական, ռազմաքաղաքական շահերի թելադրմամբ չերքեզահայերի վերաբնակեցումը և Արմավիրի հայ գաղթօջախի ստեղծումը համապատասխանում էր նաև հայ գործիչների՝ Ներսես Աշտարակեցու, Լ. Սերեբրյակովի (Արծաթագործյան), Խաչատուր և Հովհաննես Լազարյանների՝ չերքեզահայերին ուծացումից փրկելու, նրանց ազգային դեմքը պահպանելու ձգտմանը։ Դրանով է բացատրվում այն գործուն մասնակցությունը և ջերմ համակրանքը, որ ցուցաբերում էին Լ. Սերեբրյակովը և Ն. Աշտարակեցին՝ հայերի վերաբնակեցման խնդրին. իրենք՝ չերքեզահայերը ևս, նույն դրդապատճառներից ելնելով, կամովին ընդառաջում էին ռուսական իշխանությունների ձեռնարկումներին։

Արմավիրի հայկական գաղթօջախի առանձնահատկություններից էր նրա իրավական ստատուսը։ Այդ գաղթօջախն ի տարբերություն XVIII դ. հիմնադրված գաղութների, չուներ ռուսական իշխանություններից ստացած արտոնություններ։ Արմավիրում հիմնադրված հայկական դատարանում կիրառվում էր չերքեզահայերի սովորութային իրավունքը։ Այս հարցի ուսումնասիրությունը ևս գրախոսվող աշխատության հեղինակի ծառայությունն ու ներդրումն է հայ գաղթավայրերի իրավական վիճակը լուսաբանելու խնդրում։ Արմավիրի հայ գաղթօջախի առանձնահատկություններից էր նաև այն, որ մինչև 1913 թ. այն պաշտոնապես գյուղ էր համարվում, որը բարդացնում էր տեղի բնակչության պայքարն իր իրավունքների համար։

Գրախոսվող աշխատության երկրորդ գլուխը նվիրված է Արմավիրի սոցիալ-տնտեսական կյանքին։ Հեղինակը քննում է Արմավիրի բնակչության իրավական վիճակը և եզրակացնում, որ «ապահովելով իր սոցիալական հենարանը՝ տեղական խոշոր ֆեոդալական դասակարգը, ցարիզմը չէր ուզում ավելացնել տեղական բնակչության արտոնյալ խավերի թվաքանակը» (էջ 73—74)։ Այդ իսկ պատճառով ինքնակալությունը չճանաչեց չերքեզահայերի ուղղենական-ազնվական իրավունքները։

Հեղինակը հանգամանորեն, փաստերով հիմնավորված, լուսաբանում է Արմավիրի հայ գաղթօջախի բնակչության տնտեսական (գյուղատնտեսություն, արհեստագործություն, առևտուր, արդյունաբերություն) բազմաբնույթ գործունեությունը, թվերի պերճախոս լեզվով ցույց տալիս այն զգալի ավանդը, որ ներդնում էին Արմավիրի հայերը՝ երկրամասի տնտեսության զարգացման, Ռուսաստանի այլ վայրերի, ինչպես նաև հարևան երկրների հետ հյուսիս-արևմտյան Կովկասի տնտեսական կապերի զարգացման ու ամրապնդման բնագավառում։ Արմավիրի հայերի տնտեսական գործունեությունն ուղեկցվում էր սոցիալական շերտավորման անխուսափելի պրոցեսով։

Գրախոսվող աշխատության ուշագրավ բաժինն է նաև Արմավիրի հայ գաղթօջախի հասարակական-քաղաքական կյանքը լուսաբանող երրորդ գլուխը։ Այնտեղ հեղինակը ծանրանում է գաղթօջախի և մայր հայրենիքի կապի, այն պայքարի պատմության վրա, որ Արմավիրի բնակչությունը մղում էր քաղաքի ստատուս ձեռքբերելու համար։ Արմավիրի բանկիչների այդ պայքարի պատմությունը, որը գրախոսվող գրքի ուշագրավ էջերից է, Ռուսաստանի հայ գաղթավայրերի պատմության մեջ յուրօրինակ դրվագ է։ Հեղինակի ծառայությունն այն է, որ նա լուսաբանել է այն բոլոր հարցերը, որոնք անհրաժեշտ էին գաղթօջախի պատմությունը շարադրելու համար։ Լ. Պողոսյանի տեսադաշտից դուրս չեն մնացել նաև գաղթօջախի մշակույթի, ուսումնական գործի հարցերը, որոնց լուսաբանմանն էլ նվիրված է աշխատության չորրորդ՝ եզրափակիչ գլուխը։ Հեղինակը ցույց է տալիս, որ Արմավիրի հայկական գաղթօջախը սերտ կապերով կապված էր Հայաստանի, հայաշատ վայրերի հետ, ապրում էր աշխույժ մշակութային կյանքով (այն ուներ իր տպարանը, գրադարանը, թատրոնը և արական ու իգական սեռի սաների համար ուսումնարաններ)։ Հեղինակն իրավացի է, նկատելով, որ ուսումնական գործում արմավիրցիները ոչ միայն պիտի հաղթահարեին նյութական միջոցների սղությունը, ուսուցչական որակյալ կադրերի բացակայության դժվարությունը, այլև ազգային փոքրամասնությունների դեմ ինքնակալության XIX դ. երկրորդ կեսից ծայր առած ուծացման քաղաքականության հարուցած դժվարությունները։

Գրախոսվող աշխատության ուշագրավ հատվածներից են Արմավիրում ծավալված հեղափոխական շարժումները պատկերող էջերը, որոնցում հեղինակը պերճախոս փաստերով ցույց է

տալիս, որ ինչպես Ռուսաստանի հայ այլ գաղթավայրերում, այնպես էլ Արմավիրում, ինքնակալության և բուրժուական կարգերի դեմ մղված հեղափոխական պայքարում կոփվում էր առա, հայ և Կովկասի ժողովուրդների անխախտ բարեկամությունը։

Շահնկան այս աշխատության մեջ, սակայն, առկա են որոշ թերություններ ու բացթողումներ, որոնցից նշենք առավել նկատելիները։ Նախ, անհրաժեշտ էր ավելի լրիվ օգտագործել Սղիշե Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող Ե. Շահազիզի անձնական ֆոնդի նյութերը, որոնք հնարավորություն կտային ավելի լրիվ ներկայացնելու Արմավիրի հայերի սրտացավ վերաբերմունքը սուլթան Համիդի և երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության հետևանքով հայ ժողովրդին հասած արհավիրքների նկատմամբ։ Երկրորդ, ցանկալի կլիներ, եթե աշխատության վերջում, հեղինակը խոսեր (թեկուզ հակիրճ) սովետական իշխանության առաջին տարիներին Արմավիրի զարգացման մասին՝ շնորհիվ ազգային փոքրամասնությունների շրջանում կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության կատարած շնորհակալ աշխատանքի։

Ամփոփելով նշենք, որ Լ. Պողոսյանի «Արմավիրի հայկական գաղթօջախը» աշխատությունը զգալի ավանդ է Ռուսաստանի հայ գաղթավայրերի պատմության գիտական ուսումնասիրության ամբողջացման ասպարեզում։

ՎԱՀՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու